

## ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՀՈՍՔ

Երկուշաբթի, 31 Օգոստոսի, 2009

Գլենդեյլի բարձունքները (Glendale Hills) եւ յարակից քաղաքներն ընդգրկող Սան Գաբրիել լեռնային շրջանում բռնկած հրդեհները շարունակուում են տարածուել դէպի նոր բնակավայրեր: Վտանգուած հազարաւոր տների բնակիչներին հրահանգուած է հեռանալ իրենց բնակարաններից եւ ապաստան գտնել այլ շրջաններում: Գլենդեյլին կից Լա Քրեսենթայի շրջանում գործող ՀՅԴ «Զաւարեան» կոմիտէի ներկայացուցիչ Խաչիկ Հաւաթեանը յայտնել է, որ հրդեհներից վտանգուած գոտում բնակուում են աւելի քան քսան հազար հայեր: Կոմիտէն հրապարակել է յայտարարութիւն, որում իր պատրաստակամութիւնն է յայտնել օգնութեան ձեռք երկարելու հրդեհի պատճառով անապաստան մնացած հայերին, նրանց տրամադրելով Լա Քրեսենթայի Հայ կենտրոնը: «Բարեբախտաբար, թե՛ պետական ծառայութիւնների եւ թե՛ մեր հայրենակիցների հոգատար վերաբերմունքի շնորհիւ, որեւէ հայ ընտանիք անապաստան չի մնացել», ասել է Խաչիկ Հաւաթեանը: Նշենք, որ հրդեհների դէմ պայքարող երկու հրշէջներ են զոհուել, իսկ շրջանի հրշէջ ծառայութիւնները միատեղել են իրենց հնարաւորութիւնները՝ բռնկած աւերիչ կրակների դէմ պայքարելու համար:

\* \* \*

Հինգշաբթի, Օգոստոսի 27-ի երեկոյեան ժամը 8:30-ին, Մոնթբերելլոյի Հայ Կենտրոնում տեղի ունեցաւ հրապարակային դասախօսութիւն, որի ընթացքում գլխաւոր բանախօսի հանգամանքով ելոյթ ունեցաւ Երեւանի Պետական Համալսարանի արուեստի պատմագէտ, պրոֆ. Լեւոն Չուքասգեանը, որը լուսապատկերների ցուցադրութեամբ լայնօրէն անդրադարձաւ Հայոց Ցեղասպանութիւնից փրկուած հայկական արուեստի գործերին, ինչպէս նաեւ արուեստի բնագաւառում հայկական Կիլիկիայի ու Խաչակիր պետութիւնների միջեւ ծաւալուած յարաբերութիւններին: Ելոյթի աւարտին սրահում ներկայ հասարակութեան խնդրանքով պրոֆ. Չուքասգեանը խօսեց Հայաստանի ներկայիս արուեստի եւ մշակոյթի անմխիթար իրավիճակի մասին, շեշտը դնելով մասնաւորաբար հայկական ճարտարապետութեանն անյարիր երեւանեան նորակառոյց շէնքրի եւ Հայաստանի հեռուստատեսային կայաններից պատկերասփռուող մշակութային, երաժշտական եւ գեղարուեստական բովանդակութիւնից զուրկ հաղորդումների վրայ, որոնք,- նշեց նա,- վտանգում եւ պատճառ են դառնում, որ անկում ապրի հայրենի մշակոյթն ու ճարտարապետական արուեստը: Նա նաեւ քննադատական խօսքերով անդրադարձաւ Հայաստանի հեռուստատեսային կայանների հաղորդավարներին, յայտարարելով, որ նրանց թոյլ հայերէնի պատճառով մեծապէս տուժում է լեզուն, որին հետեւում են հեռուստացոյցերի առջեւ ամէն օր նստած բազմահազար հեռուստադիտողներ, որոնց թում երիտասարդներ ու պատանիներ: Նշենք, որ միջոցառումը կազմակերպել էր ՀՅԴ Մոնթբերելլոյի «Դրօ» կոմիտէութեան հանրային կապի յանձնախումբը:

\* \* \*

Փասադէնա քաղաքի Հայ Կենտրոնի նոր շէնքի գնման առիթւ, Շաբաթ եւ Կիրակի, Օգոստոսի 29-ին եւ 30-ին, առաւօտեան ժամը 10-ից մինչեւ կէսգիշեր տեղի ունեցաւ երկօրեայ փառատօն՝ կենտրոնի շրջափակում: Հակառակ շրջանին մերձակայ բարձունքներում բռնկած հրդեհներին եւ սօթ եղանակին, միջոցառմանը մասնակցեցին բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք վայելեցին հայկական համադամ ճաշատեսակներ եւ ունեցան հաճելի ժամանց: Միջոցառման ընթացքում ելոյթ ունեցան նաեւ լոսանջելոսաբնակ հայ երգիչներ, ովքեր կատարեցին հայկական ժողովրդական, հայրենասիրական եւ յեղափոխական երգեր, ստեղծելով տօնական բարձր տրամադրութիւն: Նշենք, որ Փասադէնայի նոր կենտրոնը օժտուած է շրջանի հայկական կազմակերպութիւնների համապատասխան գրասենեակներով, ընդարձակ ժողովասրահով եւ պատանիների համար կառուցուած բակետրոլի մարզասրահով: Ներկայիս կենտրոնը նախկինի համեմատութեամբ ունի կրկնապատիկ կարելիութիւններ՝ շրջանի հայութեանը ծառայելու համար:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations@ARF1890.com](mailto:PublicRelations@ARF1890.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: